ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(1918թ. հունիս – նոյեմբեր)

Մ.Զ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հայաստանի՝ որպես անկախ հանրապետության կայացման համար կարևոր էր իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների ձևավորումը: Բաթումի պայմանագրի կնքումից (4. VI. 1918) անմիջապես հետո սկսվեցին կառավարության և խորհրդարանի կազմավորման աշխատանքները, որոնք ընթացան քաղաքական խիստ լարված մթնոլորտում: Հայոց ազգային խորհրդում որոշում կայացվեց, որ կառավարության և հրավիրվելիք խորհրդարանի գործունեության համար հիմք պետք է ծառայի կուսակցության սկզբունքը:

ՀՀ անկախության հռչակումից հետո հայ քաղաքական կուսակցությունների միջև կառավարության կազմավորման շուրջ ծայր էին առել լուրջ տարաձայնություններ, անգամ միջկուսակցական բախումներ: Հայոց ազգային խորհրդի որոշմանը՝ Հովհաննես Քաջազնունուն նշանակել գործադիր իշխանության ղեկավար, ընդդիմացավ հատկապես Հայ ժողովրդական կուսակցությունը, որի անդամները ցանկություն ունեին իրենց թեկնածու Միքայել Պապաջանյանին հանձնարարել կառավարություն կազմելու իրավունքը, այսինքն՝ նրան նշանակել վարչապետի պաշտոնում: Դաշնակցությանը մեղադրելով Հայաստանի և Հայ ժողովրդի նկատմամբ կործանիչ քաղաքականության մեջ՝ Հայ ժողովրդականները ոչ մի կերպ չէին համաձայնում դաշնակցության ներկայացուցչին տեսնել վարչապետի պաշտոնում: Դեռ ավելին, պահանջում էին դաշնակցության հեռացումը քաղաքական ասպարեզից՝ դա հիմնավորելով հետևյալ կերպ. «Հայաստանի բարօրության համար կառավարման ղեկը չպետք է լինի հեղափոխականների և սոցիալիստների ձեռքում, որպեսզի թե Թուրքիան և թե Գերմանիան, որոնց հետ այսուհետև հարկադրված ենք ապրել բարի դրացիական հարաբերությունների մեջ, լիակատար վստահություն ունենան, որ հայերը կհրաժարվեն շարունակել այն ագրեսիվ քաղաքականությունը, որի վարողները բացառապես եղել են դաշնակցականները: Նրանց այդ ագրեսիվ քաղաքականությունը չի կարելի համարել հայ ժողովրդի քաղաքականություն» [1]: Երկրի տնտեսության վերականգնումը հայ ժողովրդականները հնարավոր էին համարում միայն օտար կապիտալի ներդրման պայմաններում, որը, ըստ նրանց, չէր իրականանա, եթե իշխանության գային սոցիալիստական և հեղափոխական ուժերը:

1917թ. սեպտեմբերի 29-ին Թիֆլիսում բացվեց Հայկական ազգային համախորհրդակցությունը, որն ընտրեց Ազգային խորհուրդ՝ Հայ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներից: Այն գործադիր մարմին էր, որի նախագահ ընտրվեց դաշնակցական Ա.Ահարոնյանը:

[1] *Մշակ, 10. VI. 1918:*

Հայ ժողովրդական կուսակցությունը դաշնակցությանը քննադատում էր նաև Հայաստանի ճակատագիրը համաշխարհային պատերազմի և ռուսական հեղափոխության հետ կապելու հարցում:

Խնդրի առնչությամբ դաշնակցական մամուլն էլ «Հորիզոն», «Աշխատավոր», «Լրաբեր» և դաշնակցական ուղղվածության "Кавказское слово" պարբերականներում փոխադարձ մեղադրանքներով հանդես էր գալիս Հայ ժողովրդական կուսակցության դեմ: Նշվում էր, որ եթե իրենք սխալ են գործել, ապա դրանում մեղքի բաժին ունեն ՀԺԿ-ի անունից հանդես եկող այն գործիչները, որոնք համալրել են Ազգային բյուրոն: Բացի դրանից, դաշնակցական մամուլը նշում էր ևս մի քանի պատճառներ, որոնք բացառում էին հայ ժողովրդականների մուտքը իշխանական շրջանակներ.

1. ՀԺԿ-ն կազմակերպում է արհեստական միտինգներ և ժողովներ՝ իրականում չվայելելով ժողովրդի վստահությունը:

2. Դաշնակցությունը ընտրությունների ժամանակ ստացել է 500.000 ձայն և վայելում է հայ ժողովրդի վստահությունը, ուստի և իշխանությունը պետք է կենտրոնանա ժողովրդի ընտրյալների ձեռքում:

3. Հայ հեղափոխական դաշնակցությունը ամբողջովին մերժում էր հայ ժողովրդականների տարածած այն կարծիքը, թե ընտրությունները կեղծված են եղել, որ իրականում 90 %-ոց կուսակցություն չի էլ եղել, և եթե այժմ ընտրություններ անցկացվեն, ապա պարզ կդառնա, որ Դաշնակցության հեղինակությունը խիստ անկում է ապրել, և այն կհավաքի ընդամենը 20 % - 30 % քվե. Ընդ որում, այս ամենը դաշնակցականները համարում էին միայն հայ ժողովրդականներ Հ.Առաքելյանի, Ս.Հարությունյանի և Ս.Պապաջանյանի անձնական կարծիքը:

4. Դաշնակցականները հավատացնում էին, որ հայ ժողովրդականները ոչ մի առնչություն չունեն հայ ժողովրդի հետ և բաղկացած են մի խումբ խանութպաններից, բանկիրներից և ծերացած գործիչներից:

Եթե նույնիսկ Դաշնակցության վարած քաղաքականությունը պարտություն է կրել, ապա դրա մեջ մեղավոր են ոչ թե իրենք, այլ արտաքին ավելի հզոր ուժեր:

6. ՀՀԴ-ն ժխտում էր հայ ժողովրդականների կողմից իրեն վերադրվող ագրեսիվ քաղաքականությունը և, ընդհակառակը, նրանց էր մեղադրում դրանում:

Մինչկուսակցական այդ պայքարում կառավարության ղեկավարի և նախարարական պաշտոնների միակ հավակնորդն էր իրեն համարում նաև Սոցիալիստ հեղափոխական (էսէռ) կուսակցությունը, որն իր պաշտոնաթերթում («Աշխատանքի դրոշակ») հանդես էր գալիս երկու հակառակորդ կուսակցություններին մեղադրանքներ առաջադրելով:

Նրա մեղադրանքներն առաջին հերթին ուղղված էին ՀԺԿ-ի դեմ նրանց համարելով անփորձ և հայ բուրժուազիայի ու ոչ թե ժողովրդի ներկայացուցիչներ, ինչպես իրենք իրենց կոչում էին ժողովրդականները, ուստի սոց.հեղափոխականները անհնարին էին համարում նրանց մուտքը իշխանության ոլորտներ:

«Երկրորդ խաղակիցը արժե առաջինին, - գրում է «Աշխատանքի դրոշակը» (1918, № 3): - Դաշնակցությունը երկար տարիներ պայքարել է Հայաստանում թագավորության հասնելու համար և ունի 90% վստահություն, չնայած դրան՝ ուզում է իր տեղը զիջել բուրժուական

տարրերին, իսկ ի՞նչու, եթե ցանկության դեպքում. Դաշնակցությունը իր միջից կարող է տալ և միատարր սոցիալիստական, և կոալիցիա՝ բուրժուական տարրերի հետ, նա ունի իր մեջ հարմար կազմ և միատարր բուրժուական կառավարություն ստեղծելու համար» [2]:

Ի պատասխան վերը նշվածին՝ Հայ ժողովրդական կուսակցության պաշտոնաթերթ «Մշակը» 1918թ.-ի հունիսի 22-ին լույս տեսած համարում սոցիալիստ հեղափոխականներին անվանում է «Դաշնակցության ետևից քարշ եկող մի կազմակերպություն» [3]:

Բուռն պայքարի այս մթնոլորտում էլ ձևավորվեց Հայաստանի անդրանիկ կառավարությունը, որտեղ չընդգրկվեցին ոչ ժողովրդականները, ոչ սոցիալիստ հեղափոխականները, ոչ էլ սոցիալ-դեմոկրատները: Ինչպես հետագայում պարզ դարձավ, թե կառավարությունը և թե խորհրդարանը չէին արտահայտում երկրում տիրող քաղաքական ուժերի իրական պատկերը: Այս փաստը ստիպված էին ընդունել բոլոր կուսակցությունները, թեև դրա վերաբերյալ անդրկովկասյան և սփյուռքահայ մամուլում տեղ գտած մեկնաբանությունները խիստ հակասական էին: Դաշնակցական մամուլի հրապարակումներում շեշտվում էր այն հանգամանքը, որ պառլամենտում ունեցած 18 ձայնը քիչ է 90%-անոց վստահության պայմաններում: Մյուս կողմից, իրական չէր նաև սոց. հեղափոխականների, ժողովրդականների և սոց. դեմոկրատների 6-ական ձայն ունենալը: Չնայած դրան, ոչ մի շահագրգիռ կողմ չբողոքեց ստացած մանդատների սակավաթիվ լինելու համար, հավանաբար այն պատճառով, որ 1918թ. հունիսին ոչ մի քաղաքական ուժի իշխանությունն այլևս չէր հրապուրում:

Խորհրդարանում բավարար ձայներ չստացած ձախ ուժերը իրենց գժգոհությունը արտահայտեցին մամուլում: Պրոլետարական «Խոսքը» (սոց.- դեմ.) գրում էր, որ Հայաստանում չի կայացել դեմոկրատիան, քանի որ դրա հիմնական «ատրիբուտը» ներկայացուցչական ամբիոնն է, որտեղից ազատ կարող է հնչել քննադատությունը: Բայց Հայաստանում, որտեղ գրեթե չկա բանվորություն, իսկ գյուղացիները, որոնք կտրված են հասարակական-քաղաքական կյանքից, խորհրդաբանում էլ ձայներ չունենալով, չեն կարող մասնակցել իրենց համար օրախնդիր հարցերի լուծմանը: Այդ պատճառով, սոցիալ-դեմոկրատները կոչ էին անում երկրում նախ հաստատել դեմոկրատիա՝ իր դասական իմաստով և հետո նոր կազմակերպել ներկայացուցչական մարմնի ընտրություններ [4]:

Այս ամենին պետք է ավելացնել նաև այն, որ Հայոց ազգային խորհրդի՝ Երևան ժամանելուն պես բավականին փոխվեց կուսակցական ուժերի հարաբերակցությունը: Երևան տեղափոխվելու փաստի շուրջ նույնպես հայ ազգային կուսակցությունները հակասական կարծիքներ ունեին: Հայ ժողովրդականները ամբողջությամբ մնացին Թիֆլիսում, Հայաստան ուղարկվեցին 2 կուսակցական, սոցիալ-դեմոկրատները ևս չցանկացան Երևան տեղափոխվել, այնտեղ գնաց ընդամենը մեկ ներկայացուցիչ [5]:

Հայաստանի Առաջին Հանրապետությունում, ուր վարչաձև էր ընդունվել պառլամենտարիզմը, իշխանության գործադիր և օրենսդիր

---

[2] Աշխատանքի դրոշակ, 16. VI. 1918:
[3] Մշակ, 22. VI. 1918:
[4] Խոսք, Երևան, 26. X. 1918:
[5] Վեմ, Փարիզ, Երևան, մայիս-հունիս, 1934:

մարմինները ձևավորվելուց անմիջապես հետո բարդ հարաբերությունների մեջ մտան միմյանց հետ: Դրան նպաստում էին մի շարք օբյեկտիվ պատճառներ, հատկապես երկրի նախագահի, հիմնական օրենքի (սահմանադրության) պակասը, այն դեպքում, երբ գոյություն չուներ գոնե սովորութային նորմերի որոշակի գործող համակարգ: Կային նաև մի շարք սուբյեկտիվ պատճառներ, որոնք հիմնված էին կուսակցական անհանդուրժողականության վրա:

Դաշնակցական մամուլը քննադատում էր խորհրդարանը՝ նշելով, որ այն գերագույն իրավունքներով է օժտված, մասնավորապես նշվում էր, որ չի կատարում իրեն հասանելիք օրենսդրական ֆունկցիան և ստանձնել է վարչական ու դատական, կառավարություն կազմելու, պետական վերահսկողություն իրականացնելու ֆունկցիաները, որոշ չափով իրեն է վերապահել նաև արտաքին հարաբերությունների կարգավորումը և այլն[6]: Ավելի ուշ, դաշնակցական մամուլում լույս տեսած հոդվածներում դաշնակցության գործիչները զղջում էին, որ իրենք ամբողջովին չկազմեցին պառլամենտը և մյուս քաղաքական ուժերին թույլ տվեցին մտնելու օրենսդիր մարմնի մեջ[7]:

Կառավարությունն էլ իր հերթին էր քննադատության ենթարկվում խորհրդարանում: Ձախ ուժերը գտնում էին, որ Հայաստանում խախտվում են հանրապետական կառավարման սկզբունքները, քանզի գործադիր իշխանության ուղիները, քայլերը չեն ընդգծվում և մշակվում ժողովրդական ներկայացուցչության կամ խորհրդարանի կողմից, կառավարությունը չի կատարում իր գործունեության ընթացքում խորհրդարանին հաշվետու լինելու պարտականությունները[8]: Կառավարությունը մեղադրվում էր նաև նրանում, որ երկրում շարունակում էր տիրել սոցիալ-տնտեսական և քաղաքական բարդ իրավիճակ՝ ծանր կացության մեջ էր գաղթականությունը, բարձիթողի էր ժողովրդի պարենավորումը[9]:

Հայաստանի խորհրդի բացման առաջին իսկ օրերին, խորհրդի ծայրագույն ձախ թևը խորհրդի ամբիոնից ազդարարեց, որ կառավարությունը չպետք է ժառանգի այն քաղաքականությունը, որը վարել է նախկինում Հայոց ազգային խորհրդի գործադիր մարմինը[10]:

Երկրի ֆինանսական դրությունը անբավարար էր, քանի որ պետական գանձարանը հարստացնելու միակ միջոցը հարկերի, եկամտային տուրքի գանձումն էր, այն էլ 1910թ. ընդունված կարգով, որն իրեն բոլորովին չէր արդարացնում տվյալ պայմաններում[11]: Վարչապետ Հ.Քաջազնունու բնորոշմամբ՝ երկիրը ներկայացնում էր «ավերակների կույտ ու անձև քաոս»[12]: Հայաստանի խորհուրդը ևս ոչ մի շոշափելի աշխատանք չէր կատարում: Այն փաստորեն անգործության էր մատնված:

Կառավարությունը 1918թ. աշնան սկզբին արդեն հայտնվել էր ճգնաժամային վիճակում, և նախարար-նախագահ Հ.Քաջազնունին բանակցություններ էր վարում խորհրդարանական խմբակցությունների հետ՝ նոր

---

[6] Նույն տեղում, Զ, հուլիս-օգոստոս, 1934:
[7] Նույն տեղում:
[8] Խոսք, 22. IX. 1918:
[9] Հորիզոն, Թիֆլիս, 26.IX. 1918:
[10] Խոսք, 22.IX.1918:
[11] Վէմ, Գ, մայիս-հունիս, 1935:
[12] Կայծ, Երևան, 2.XI.1918:

կոալիցիոն կառավարություն կազմելու համար: Ժողովրդականները պահանջում էին իրենց տրամադրել նախարարական պաշտոնների կեսը : Շուտով այդ կառավարությանը ցանկացան անդամակցել նաև սոցիալ-դեմոկրատները և էսէռները: Առաջինները հավակնում էին ստանալ արտաքին և ներքին գործերի նախարարների պաշտոնները: Սակայն որոշ ժամանակ անց և սոցիալ-դեմոկրատները, և էսէռները հրաժարվեցին ստեղծվելիք կառավարության մաս կազմել:

Գործերի այս ընթացքը բխում էր ՀՀԴ-ի շահերից, քանի որ դաշնակցականները չէին էլ ցանկանում կառավարությունում իրենց կողքին տեսնել ձախ ուժերի ներկայացուցիչներին:

Ինչ վերաբերում էր Հայ ժողովրդական կուսակցության հետ համագործակցելուն, ապա դա բխում էր շատ հարցերում, մասնավորապես արտաքին քաղաքականության բնագավառում միանման կողմնորոշում ունենալուց և արտահայտվում էր նրանց՝ Հայկական հարցի նկատմամբ դրսևորած վերաբերմունքում:

Խորհրդարանի՝ 1918թ. նոյեմբերի 4-ին գումարված նիստում վարչապետ Հ.Քաջազնունին ներկայացրեց կառավարության հրաժարականը՝ խորհրդարանի և կառավարության միջև ստեղծված լարված մթնոլորտում անհնարին համարելով կառավարության հետագա աշխատանքը: Խորհրդարանում այս կապակցությամբ տեղի ունեցած քննարկումների հետևանքով ձայների մեծամասնությամբ վավերացվեց կառավարության հրաժարականը և Հ.Քաջազնունուն հանձնարարվեց նոր կառավարություն ձևավորել, այնպես, որ «Հայաստանի կառավարությունը կազմվի կոալիցիոն սկզբունքով»[13]:

ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ ЗАКАВКАЗЬЯ И АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ ОБ ОРГАНАХ ВЛАСТИ 1-ОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ (ИЮНЬ-НОЯБРЬ 1918Г.)

М.З.ТАДЕВОСЯН

Резюме

После Батумского соглашения (4 июня, 1918г.) начались работы по формированию правительства и парламента РА.Процесс сопровождался бурными межпартийными столкновениями. Решение Армянского Национального Совета о назначении главой правительства члена партии Дашнакцутюн Ованеса Каджазнуни вызвало сильное противостояние, особенно со стороны членов Армянской Национальной партии, которые стремились добиться назначения на вышеуказанный пост своего кандидата – Микаела Пападжаняна, при этом выдвигая многочисленные обвинения в адрес главенствующей партии. ("Мшак").

[13] *Հորիզոն, 10. XI. 1918:*
[14] *Ժողովուրդ, Երևան, 6. X. 1918.*

Члены партии Дашнакцутюн, в свою очередь, выдвигали обвинения против АН партии, напоминая, что Дашнакцутюн, получившая 500000 (90%) голосов на всеобщих выборах, тем самым получает возможность формирования государственных органов правления по своему усмотрению ("Оризон", "Ашхатавор", "Лрабер").

В то же время не пользующаяся особым авторитетом среди избирателей Армянская партия Соц.Революционеров пыталась выдвинуть своего кандидата на пост главы правительства ("Ашхатанкидрошак").

В результате довольно-таки бурной межпартийной борьбы были образованы парламент (Айастани хорурд) и правительство РА.

Организация ветвей власти в столь противоречивой обстановке далее послужила причиной для установления сложных отношений между ними, что и привело к распаду первого правительства РА (4 ноября 1918г.).

Формирование следующего правительства было также поручено О.Каджазнуни, при этом предусматривалось придерживаться коалиционного принципа.